



## Բալասանյան Վիտալի Միխայիլի

Վիտալի Միխայիլի Բալասանյանը ծնվել է 1959թ. մարտի 5-ին, Լեռնային Ղարաբաղի Ասկերան ավանում, ներկայում՝ քաղաք Ասկերան:

1976թ. ավարտել է Ասկերանի միջնակարգ դպրոցը, 1990թ.՝ Երևանի կոոպերատիվ առևտրի տեխնիկումը, 2011թ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ տնտեսագետի մասնագիտությամբ:

1977-1979թ.թ. ծառայել է խորհրդային բանակում:

1976-1990թ.թ. աշխատել է Ասկերանի շրջանի հասարակական սննդի հիմնարկ-ձեռնարկությունում՝ տաղավարի վարիչ, արտադրության պետ - փոխտնօրեն:

1990թ. հանդիսացել է Ասկերանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարը:

1992թ. օգոստոսին նշանակվել է ԼՂՀ Պաշտպանության բանակի Ասկերանի պաշտպանական շրջանի հրամանատար, 1996-1998թ.թ.՝ հանդիսացել գործադիր մասնակցի հրամանատար, 1998-

1999թ.թ.՝ ԼՂՀ ՊԲ հրամանատարի տեղակալ, 1999թ. սեպտեմբերից մինչև 2005թ. հունվարը՝ ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ:

2000թ. մարտին նրան շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

2000-2005թ.թ. միաժամանակ եղել է ,Արցախի պատերազմի վետերանների միություննե հասարակական կազմակերպության նախագահը:

Ընտրվել է ԼՂՀ 1-ին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

2005թ. խորհրդարանական ընտրություններում ընտրվել է ԼՂՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: Հանդիսացել է Ազգային ժողովի պաշտպանության, անվտանգության և օրինապահականության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

2007-2010թ.թ. աշխատել է ԼՂՀ Նախագահի խորհրդական:

2010թ. մայիսի 23-ի խորհրդարանական ընտրություններում ընտրվել է ԼՂՀ 5-րդ գումարման

Ազգային ժողովի պատգամավոր: Ազգային ժողովի պաշտպանության, անվտանգության և

օրինապահականության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

2011 թվականից ,Հավատքե բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների

խորհրդի նախագահն է:

Պարգևատրվել է ԼՂՀ 1-ին աստիճանի ,Մարտական խաչե շքանշանով, Հայաստանի

Հանրապետության մի շարք շքանշաններով և մեդալներով, իսկ 2002թ. սեպտեմբերին արժանացել

է ԼՂՀ բարձրագույն՝ ,Արցախի հերոսե կոչման՝ պարգևատրվելով ,Ոսկե արծիվե շքանշանով:

Անկուսակցական է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



### Սահակյան Բակո Սահակի

Բակո Սահակի Սահակյանը ծնվել է 1960 թվականի օգոստոսի 30-ին, Ստեփանակերտ քաղաքում:  
1977 թվականին ավարտել է Ստեփանակերտի N 1 միջնակարգ դպրոցը:  
1978-1980 թվականներին ծառայել է խորհրդային բանակի շարքերում:  
1981 թվականին աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի N 9 արտադրական մեքենայացված կոմբինատում՝ որպես փականագործ-մեխանիկ: Աշխատել է Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատում՝ որպես քարջարդ բանվոր:  
1983-1987 թվականներին աշխատել է հնությունների վերականգնման գիտական վարչության Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես վարպետ-ռեստավրատոր:  
1987-1990 թվականներին՝ մատակարարման մարզային վարչության աշխատակից:  
1988 թվականից արցախյան շարժման առաջամարտիկներից է:  
1990 թվականին մտել է Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի շարքերը:  
1992-1993 թվականներին՝ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի պետի տեղակալ:  
1993-1995 թվականներին՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի թիկունքի շտաբի պետ, իսկ 1995-1996 թվականներին՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարի՝ արտաքին կապերի գծով տեղակալ:  
1996-1997 թվականներին՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ:  
1997-1999 թվականներին՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարի օգնական:  
1999-2001 թվականներին՝ ԼՂՀ ներքին գործերի նախարար:  
2001-2007 թվականներին՝ ԼՂՀ ազգային անվտանգության պետվարչության պետ, ԼՂՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն: Չինվորական կոչումը՝ գեներալ-մայոր:  
2007 թվականի հուլիսի 19-ին կայացած նախագահական ընտրություններում ընտրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ: 2007 թվականի սեպտեմբերի 7-ին ստանձնել է ԼՂՀ Նախագահի պաշտոնը:  
Պարգևատրվել է ԼՂՀ Մարտական խաչե 1-ին աստիճանի շքանշանով, ՌԴ Պետրոս Մեծե 1-ին աստիճանի շքանշանով, ՀՀ Հայրենիքին մատուցած ծառայությունների համարե 1-ին աստիճանի և Վազգեն Սարգսյանե մեդալներով, ինչպես նաև այլ պարգևներով:  
Ավարտել է Արցախի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:  
Հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության անվտանգության, պաշտպանության և օրինապահականության հարցերով ակադեմիայի իսկական անդամ:  
Անկուսակցական է:  
Ամուսնացած է, ունի երկու զավակ:



### Սողոմոնյան Արկադի Իվանի

Ծնվել է 1962 թվականի սեպտեմբերի 24-ին, ԼՂՀ Մարտունու շրջանի Ղզղալա (Բերդաշեն) գյուղում:

Հայրենի գյուղի միջնակարգ դպրոցն ավարտել է գերազանցությամբ:

1980-1985թ.թ. սովորել է Ստեփանակերտի Պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում:

1985-1991թ.թ. աշխատել է Բերդաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցիչ:

1985-1986թ.թ. համատեղությամբ դասախոսական աշխատանք է կատարել Ստեփանակերտի Պետական մանկավարժական ինստիտուտի ընդհանուր տեխնիկական առարկաների ամբիոնում:

1986թ. ընդունվել և 1990թ. ավարտել է ՀՍՍՀ ԳԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի ասպիրանտուրան, 1991թ. ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հեղինակ է տասնյակ գիտական թեզիսների և հոդվածների:

1992թ. աշխատանքի է անցել Հայկական պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղում, այնուհետև Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ֆիզիկայի ամբիոնում՝ որպես ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ:

1992-1995թ.թ. ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակում: 1993թ. սեպտեմբերին նշանակվել է ԼՂՀ Պաշտպանության բանակի հակաօդային պաշտպանության զորքերի վարչության շտաբի պետ:

1995-2000թ.թ. եղել է ԼՂՀ 2-րդ գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, սոցիալական ոլորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

1999թ. ապրիլին ընտրվել է Արցախի սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ: 2005թ. հունվարին հայտարարվել է ԱՍԴԿ և ԱԺԿ միաձուլման մասին:

2000-2005թ.թ. եղել է ԼՂՀ 3-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր՝ սոցիալական ոլորտի մշտական հանձնաժողովի անդամ ոչ մշտական հիմունքներով:

2001թ. որպես դոցենտ աշխատել է ԱրԴՀ մաթեմատիկայի ամբիոնում:

2002թ. հոկտեմբերին ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի առաջին նախագահ, միաժամանակ համատեղությամբ դասավանդել է ԱրԴՀ մաթեմատիկայի ամբիոնում՝ մինչև 2004թ.:

2005թ. հոկտեմբերին ազատվել է ԼՂՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնից՝ լիազորությունների ժամկետն ավարտվելու կապակցությամբ: 2005-2008 թ.թ. եղել է ԱԺԿ գրասենյակի ղեկավար:

2008թ. մայիսին ընտրվել է ԼՂՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր՝ համամասնական ընտրակարգով, նույն թվականի հունիսից՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ ոչ մշտական հիմունքներով:

2008թ. հոկտեմբերին ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ: 2010թ. հունիսին ավարտվել են նրա պատգամավորական լիազորությունները: 2010 թվականի մայիսից անկուսակցական է:

2011թ. հոկտեմբերից աշխատում է Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղում որպես ուսումնագիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի երկու որդի: